1877-1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

XIX դ. 70-ական թվականները նշանավորվեցին ազգային-ազատագրական պայքարի նոր ալիքով, որը բարձրացավ Օսմանյան Թուրքիայի արևմտյան և արևելյան գավառներում: 1875 թ. Բոսնիայում ու Հերցեգովինայում ծայր առած ապստամբությունները ոտքի հանեցին Բուլղարիան, որին արձագանքեցին Սերբիան և Չեռնոգորիան՝ պատերազմ հայտարարելով Թուրքիային: Սակայն իրականում պայքար էր գնում Ռուսաստանի և Անգլիայի միջև: Ղրիմի պատերազմից հետո ռուսական ազդեցությունը Թուրքիայում նվազել էր, իսկ այդ «ազդեցության գլխավոր ուժը Եվրոպական Թուրքիայում եղել են միշտ սլավոնական ազգությունները»[1], որոնց վրա այս շրջանում Ռուսաստանը բևեռել էր ուշադրությունը, որպեսզի ուժեղացնի իր դիրքը Արևելյան խնդրում. «Համասլավոնական շարժումը ուժեղացվեց Ղրիմի պատերազմից հետո»[2]՝ խրախուսելով բալկանյան ժողովուրդների հեղափոխական պայքարը: Ռուսաստանը ձգտում էր բալկանյան ճգնաժամի միջոցով անդամահատել Թուրքիան և դառնալ նեղուցների տիրակալը, իսկ Անգլիան իր հերթին ցանկանում էր խոչընդոտել Ռուսաստանի ռազմավարական ծրագրերին՝ պահպանելով Թուրքիայի ամբողջականությունը՝ որպես «Ռուսաստանի պատնեշ»՝ վերջինիս հետ պահելով նեղուցներից: Շահարկելով Միդհատ փաշայի եվրոպական կողմնորոշումը՝ անգլիական կառավարությունն իր կողմը գրավեց նրան. վերջինս Թուրքիայի եվրոպականացումը տեսնում էր սահմանադրական կարգերի հաստատման մեջ, ինչը կփրկեր Օսմանյան կայսրությունը անդամահատելուց: Մինչդեռ, օրեցօր խորանում էր բալկանյան ճգնաժամը: Բուլղարական ջարդերը չէին կարող անտարբեր թողնել Ռուսաստանին. «Ռուսաստանը վրդովվել և հուզվել էր սաստիկ բուլղարական սարսափներից, սլավոնոֆիլ կոմիտեները գործում էին եռանդով և ավելի հուզում ռուս ժողովրդին և միահամուռ պահանջում էին ցարից պատերազմ հռչակել Թուրքիայի դեմ»[3]:

Բալկանյան ապստամբության կայծը խանդավառեց նաև հայ ժողովրդին. 1875 թ. նորից ապստամբեց Զեյթունը, նաև՝ Վանը, որը մատնվեց հրի: Բալկանյան թերակղզու ողբերգական իրադարձությունները, նաև Արևմտյան Հայաստանի հուզումները գտնվում էին մեծ տերությունների ուշադրության կենտրոնում,

---

[1] *Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 54:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 58:*

մասնավորապես՝ բրիտանական դիվանագիտության, որը Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման նպատակով աջակցում էր օսմանյան կառավարությանը՝ ջլատելու բալկանյան ժողովուրդների և հայերի ազգային-ազատագրական շարժումը[4]:

Թշնամական էր նաև Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի դիրքորոշումը բալկանյան ու արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ: Աջակցելով օսմանյան կառավարությանը՝ ազատագրական շարժումները Թուրքիայի արևելյան և արևմտյան մասերում ձախողելու հարցում, նրանք խոչընդոտում էին «Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը Բալկաններում և Արևմտյան Հայաստանում»[5]:

Այսպիսով, Անգլիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, կազմելով հակառուսական բլոկ, վարում էին թուրքամետ քաղաքականություն: Մեկուսացված Ռուսաստանը փորձում էր խաղաղ ճանապարհով լուծել արևելյան ճգնաժամը, մինչդեռ Անգլիան շտապում էր հրահրել ռուս-թուրքական պատերազմ:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա. Գորչակովը նույնիսկ այս շիկացած իրավիճակում հակված էր կոնֆլիկտը լուծելու դիվանագիտական ճանապարհով[6]: Ռուսաստանը նախաձեռնում է հրավիրել միջազգային կոնֆերանս արևմտյան մեծ տերությունների մասնակցությամբ՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող սլավոնական և քրիստոնյա մյուս ժողովուրդների հարցը դիվանագիտական ուղիով լուծելու նպատակով, որը պիտի տեղի ունենար Կ. Պոլսում: Կոնֆերանսին պիտի մասնակցեին 1856 թ. Փարիզի դաշնագիրը ստորագրած 7 պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան, Թուրքիան և Ռուսաստանը: Ռուսաստանի պատվիրակությունը գլխավորում էր Կ. Պոլսի ռուսական դեսպան գեներալ-ադյուտանտ Ն. Իգնատևը: Արևմտահայության խնդրանքով Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը կոնֆերանսի բացման նախօրեին դիմում է Կ. Պոլսի անգլիական դեսպան Էլիոտին՝ պահանջելով, որ կոնֆերանսում քննարկվի նաև Արևմտյան Հայաստանի «բնակչության դրության բարելավման հարցը», և բալկանյան սլավոնների համար նախատեսվող ինքնավարության նման մի ինքնավարություն էլ տրվի արևմտահայերին[7]:

Միդհատ փաշան թուրք ազգայնականների հետ քաջալերում էր հայերին, քանի որ «թուրք կառավարության ձեռքում մեծ զենք էր այն հանգամանքն, որ միևնույն երկրում բնակվող ուրիշ քրիստոնյա ցեղեր, որոնք ոչ թվով և ոչ կրթությամբ ետ չէին մնում բուլգարներից և բոսնիացիներից, բողոքում էին այս վերջիններին առանձնաշնորհումներ տրվելուն դեմ և պահանջում էին նույնպիսի իրա-

---

[4] *Խ. Բ ա դ ա լ յ ա ն. Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում (1877-1878), Երևան, 1959, էջ 17:*

[5] *Նույն տեղում, էջ 18:*

[6] С. К. Б у ш у е в. А. М. Горчаков. М., 1961, с. 103.

[7] *Ս ա ր ո ւ խ ա ն. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 129:*

վունք նաև իրանց համար»[8]: Բ. Դուռը քաջ գիտակցում էր, որ հայերի բողոքները պիտի լինեին ի վնաս բուլղարների և բոսնիացիների՝ իրականում ոչ մի օգուտ չբերելով մյուս քրիստոնյաներին: Սակայն Էլիոտը կտրուկ մերժում է հայոց պատրիարքի առաջարկությունը՝ պարզաբանելով, թե «դեսպանախորհրդի նպատակը միայն խաղաղեցնել է այն նահանգներն, ուր ապստամբությունն սպառնում էր ընդհանուր խաղաղության»[9]: Ազգային ժողովի երեսփոխան Թ. Պեկյանը նշում է, որ «1876 դեկտեմբերի 10-ին, երբ տակավին մեծ պատերազմը չէր հրատարակված, և արևելյան խնդիրը Կ. Պոլսո դեսպանաժողովով լուծվելու հույս կար, Ազգային ժողովը նկատողության առնելով ազգին դառն վիճակն ու Հայկական ըսված կենսական խնդիրը, ժամանակին ու պարագաներուն համեմատ որոշում մը տալով, գործադրությունը հանձնեց Ս. Պատրիարքին»[10]: Սակայն Պեկյանը փաստում է, որ «դեսպանաժողովը չհաջողեցավ տիբլոմասիով լուծել Արևելյան կնճիռը», և որ այն վերստին առաջ քաշվեց պատերազմից հետո[11]: Հայ ժողովրդի խնդրանքը՝ միջազգային կոնֆերանսում քննարկել և լուծել հայերի իրավազուրկ կացության բազմաչարչար հարցը, Ներսես պատրիարքը հիմնավորում էր հետևյալ պարզաբանություններով. «Հայկական խնդիրը, իր արդի ձևին մեջ, ինքիրմե չ՚ծնավ. այլ ընդհանուր Արևելյան խնդիրեն ծագեցավ: Ահավասիկ ի՚նչպես: Հայոց խնդիր մը կար տասն և ավելի տարիներե ի վեր, մինչդեռ ո՚չ Հերսեք-Պոսնայի խնդիր կար, ոչ Պուլկարաց խնդիր քաղաքական ձևով: Հայաստանի հայոց կրած հարստահարության խնդիրն էր այն. Ազգին և Տերության մեջ մնացած էր. և Ազգը անընդհատ տասը տարի, իր հաձնաժողովներովը, իր Քաղ. ժողովներովը, իր երեսփոխանական ժողովներովը, իր Պատրիարքներովը, այս հարստահարությանց բարձումը կհայցեր բարձրագույն Դռնեն: Ահա՚ այս էր միայն Հայոց խնդիրը: Եկավ Հերսեք-Պոսնիայի խնդիրը՝ և ապա Պուլկարիո խնդիրը: Այս երկու խնդիրներուն մեջ խառնված էր հարստահարության խնդրույն հետ ազգային ինքնօրինության խնդիրն ալ»[12]: Եվ 1876 թ. դեկտեմբերի 16-ին Կ. Պոլսում բացված միջազգային կոնֆերանսում արևմտահայության կացության հարցն այդպես էլ չքննարկվեց: Ռուսաստանի պատվիրակության պնդումով վարչական ինքնավարություն տրվեց Բոսնիային, Հերցեգովինային և Բուլղարիային: Որոշվեց նաև ստատուս քվո պահպանել Սերբիայում ու Չեռնոգորիայում:

1876 թ. դեկտեմբերի 23-ին կոնֆերանսի որոշումները պիտի հանձնվեին թուրքական պատվիրակությանը: Սակայն «Նոր օսմանները», քաջալերված անգլիական պատվիրակության խարդախ քաղաքականությամբ, կատարեցին պալատական հեղաշրջում՝ տապալելով Մահմեդ Ռյուշտյուի կառավարությունը: Նոր կառավարությունը գլխավորեց անգլիական կողմնորոշում ունեցող Միդհատ փաշան, և Օսմանյան Թուրքիան հռչակվեց սահմանադրական միապետա-

---

[8] *Նույն տեղում, էջ 130:*

[9] *Նույն տեղում, էջ 130-131:*

[10] *Ատենագրություն Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1878, էջ 160:*

[11] *Նույն տեղում:*

[12] *Նույն տեղում, էջ 61:*

կան երկիր: Միդհատ փաշայի կառավարությունը մերժեց Կ. Պոլսի միջազգային կոնֆերանսի որոշման նախագիծը՝ հիմնավորելով, որ Օսմանյան կայսրության թուրքահպատակ ժողովուրդների վիճակը միայն թուրքական իշխանությունների իրավասության հարցն է, և արդեն իսկ սահմանադրությամբ նախատեսվում է բոլոր հպատակների հավասարությունը օրենքի առջև:

1877 թ. հունվարին Կ. Պոլսի կոնֆերանսն ավարտվեց՝ չհասնելով դրական արդյունքի, ինչը հանգեցրեց արևելյան ճգնաժամի խորացմանը: Ռուսաստանը ևս մի փորձ կատարեց՝ Թուրքիային դրդել համաձայնության՝ մեծ տերությունների հետ: Այդ նպատակով 1877 թ. փետրվարին Կ. Պոլսի ռուս դեսպան Ն. Իգնատևին հանձնարարվեց մեկնել Եվրոպայի գլխավոր մայրաքաղաքները և ստորագրել տալ այն արձանագրությունը, որում հաստատվում էին Կ. Պոլսի միջազգային դեսպանախորհրդի որոշումները: 1877 թ. մարտի 31-ին այդ փաստաթուղթը ստորագրվեց՝ ստանալով Լոնդոնյան արձանագրություն անունը: Փաստաթղթին կցված էին 2 հոչակագիր. առաջինում ասվում էր, որ եթե Թուրքիան ձեռնարկի բարեփոխումներ, ապա Ռուսաստանը բանակցություններ կսկսի զինաթափման շուրջ: Երկրորդ հոչակագրում նշվում էր, որ եթե Ռուսաստանը և Թուրքիան փոխադարձ զինաթափման մասին համաձայնության չգան, ապա Լոնդոնյան արձանագրությունը կկորցնի իր ուժը: Անգլիայի դրդմամբ 1877 թ. ապրիլի 12-ին Թուրքիան մերժեց Լոնդոնյան արձանագրությունը, որով ժխտում էր «Թուրքիայի ներքին գործերին միջամտելու՝ Եվրոպայի իրավունքները»[13]:

Դիվանագիտությունն անզոր էր կանխել իրադարձությունների ընթացքը: 1877 թ. ապրիլի 25-ին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Ըստ Ա. Գորչակովի՝ «պատերազմը պիտի ստիպի սուլթանին իրավունքներ և արտոնություններ շնորհել քրիստոնյա հպատակներին», և այն չի հետապնդում Օսմանյան կայսրության անդամահատումն ու Արևելյան հարցի վերջնական լուծումը[14]: «Իր մանիֆեստում Ալեքսանդր II-ը հայտարարեց, որ անձնական փառասիրության որևէ ակնկալիք չունի, այլ [Ռուսաստանի] պարտքն է համարում իր ձեռքը վերցնել ճնշված քրիստոնյաների գործը»[15]:

Լորդ Դերբին փորձում էր ապացուցել, որ Ռուսաստանն իր սեփական «բռնի գործողությունների» պատճառով դուրս է մղվում եվրոպական կոնցերտից[16]: Ռուսական դիվանագիտությունն անհրաժեշտ էր համարում չեզոքացնել արևմտյան պետություններին, քանզի նրանք Ռուսաստանի գլխավոր և վտանգավոր հակառակորդներն էին Բալկաններում և Մերձավոր Արևելքում: Այդ պատճառով Ռուսաստանը, նախքան զենքի դիմելը, գաղտնի բանակցում է Ավստրո-Հունգարիայի հետ, և 1877 թ. հունվարի 15-ին վերջինիս հետ Բուդապեշտում ստորագրում գաղտնի համաձայնագիր, որով Ավստրո-Հունգարիան պատրաստվում է պահպանել չեզոք քաղաքականություն ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Ռուսաստանն էլ իր հերթին խոստանում է համաձայնել

---

[13] Дневник Д. А. Милютина. Т. II, 1876-1877. М., 1949, с. 153.

[14] С. К. Б у ш у е в. *Նշվ. աշխ., էջ 104:*

[15] А. Д е б и д у р. Дипломатическая история Европы. Т. II. М., 1947, с. 474.

[16] *Նույն տեղում, էջ 475:*

Բոսնիայի և Հերցեգովինայի օկուպացմանը՝ Ավստրո-Հունգարիայի կողմից: Ընդսմին, Ավստրո-Հունգարիան չէր առարկում, որ Ռուսաստանը օկուպացնի Բեսարաբիայի այն մասը, որն անջատվել էր Ռուսաստանից 1856 թ. Փարիզի դաշնագրով:

Նման բանակցությունների մեջ է մտնում Ռուսաստանը նաև Գերմանիայի հետ, որը նույնպես խոստանում է չեզոք մնալ պատերազմի ընթացքում: Բիսմարկյան Գերմանիային ձեռնտու էր ռուս-թուրքական պատերազմը, քանզի Ռուսաստանը կմխրճվեր արևելյան գործերի մեջ: Գերմանիան ցանկանում էր, որ էլ ավելի սրվեն անգլո-ռուսական հարաբերությունները, ինչի հետևանքով ինքը հնարավորություն կստանար վերջնականապես ջախջախելու Ֆրանսիային, իսկ Գերմանիայի դիրքերը Բալկաններում ու Եվրոպայում կամրապնդվեին:

Անգլիայի դիրքորոշումը միանշանակ էր: Նա հետապնդում էր երկու նպատակ՝ Ռուսաստանին շեղել Մերձավոր Արևելքից և Արևմտյան Հայաստանից՝ կենտրոնացնելով նրա ուշադրությունը Բալկանների վրա: Դիվանագիտական այս քայլն ուներ ռազմավարական նշանակություն, քանի որ հնարավորություն էր ընձեռում Ռուսաստանի դեմ ստեղծել եվրոպական պետությունների բլոկ: Երկրորդ նպատակն էր Թուրքիայի տնտեսական և ֆինանսական էքսպանսիան, որը կստիպեր նրան տարածքային զիջումներ անել հօգուտ Անգլիայի:

Հայ ժողովուրդը հույսեր էր տածում, որ պատերազմում Ռուսաստանի հաղթանակը Օսմանյան կայսրության քրիստոնյաներին քաղաքական ազատություն կբերի: Գևորգ վրդ. Ռուսճուգյանն իր հիշատակարանում գրում է, որ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչը Կ. Պոլսի դեսպան կոմս Ա. Նելիդովի և Ն. Իգնատևի հետ ունեցած իր զրույցի ժամանակ նշել է. «Շատ գոհ եմ հայ հասարակութենեն, սիրալիր ընդունելություն մը ըրած են և կընեն մեր զորաց… ես կը սիրեմ հայերը…»[17]: Պատրիարքը փափագում էր արտոնել «Ռուսիո դեսպանին և կրան տյուք Նիքոլա Իշխանին ներկայացնել Հայոց թշվառ և հարստահարյալ վիճակն, և Ռուսիո Կայսեր գթությունն հայցել, որով ի շնորհս միայն հայերին, իբրև Արևելյան քրիստոնյա ազգ, պիտի կարենան ազատության հասնիլ, նման պուլղարաց»[18]: Զրույցի ավարտին իշխանը խոստացել է. «ո՛չ ես և ո՛չ եղբայրս՝ Կայսրն չեմք մոռնար զձեզ»[19]՝ ավելացնելով. «գրե Պատրիարքին թե ձեր խնդիրն և հույսն ի դերև չի պիտի ելնեն, անհոգ եղեք, եղբորս հետ (կայսրի – Գ. Հ.) բանակցության մեջ եմք»[20]: Բանակցությունները ռուսաց կայսրի հետ պսակվեցին հաջողությամբ. կայսրը հավանություն էր տվել հայերի խնդիրն առանձին հոդվածով ընդգրկել ռուս-թուրքական պայմանագրի մեջ, ինչի վերաբերյալ կայսրն առաջարկել էր ծրագիր ներկայացնել Մեծ իշխանին՝ թե «ի՞նչ են Հայոց իրձն ու փափագն»[21]: Եվ այս նպատակի իրագործման համար Կ. Պոլսի Ազգային ժողովը 1877 թ. հոկտեմբերի 21-ին որոշում կայացրեց Հայկական դատը ներկայացնել

---

[17] *Լ. ե ռ. Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 51:*

[18] *Նույն տեղում, էջ 50:*

[19] *Նույն տեղում, էջ 54:*

[20] *Նույն տեղում, էջ 55:*

[21] *Նույն տեղում:*

Ռուսաստանի «բարեհայեցողությանը»: Սակայն պատրիարքն ուներ իր սեփական դիրքորոշումը, գտնելով, որ անխոհեմ է գործել օսմանյան կառավարության դեմ՝ խնդրելով օտար կամ եվրոպական միջամտություն: Դրա փոխարեն, դեռևս 1876 թ. պատրիարքը կարծում էր, որ թուրք կառավարության միջոցով է պետք ձեռք բերել Հայաստանի համար անհրաժեշտ բարեփոխումները. «…մեր ազգն Օսմանյան տերության հետ պիտի ապրի և երբեք անկե չբաժանվիր. երբեք մեր ազգն ուրիշ քաղաքականությանց գործիք չըլլար… պետք չէ բնավ մոռանալ, որ Օսմանյան տերությունը մեծ բարերարություններ ըրած է մեզ. մեր կրոնքին, մեր լեզվին և մեր ազգության մինչև ցայսօր պահպանությունն Օսմանյան տերության պարտական ենք…այս տերության ամեն ցավերուն ցավակից և ուրախությանցն ուրախակից եղած ենք և պիտի ըլլանք միշտ…»[22]: Այս տեսակետին համամիտ չէին ո՛չ ժողովուրդը, ո՛չ էլ բարձրաստիճան եկեղեցականները: Կ. Պոլսի հասարակական կարծիքն ապավինում էր օտար պետություններին դիմելու անհրաժեշտությանը, քանի որ ժամը հասունացել էր: Ազգային ժողովի պատգամավորները խնդրում էին Գևորգ Դ կաթողիկոսին՝ ռուս կայսրին ներկայացնել Հայաստանի գալիքին վերաբերող խնդրանքները: Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանն առաջարկում է համոզել Ներսես Վարժապետյանին՝ փոխել իր քաղաքական գիծը, և Խրիմյանի առաջնորդությամբ եպիսկոպոսներից կազմված մի պատգամավորություն դիմում է Ներսես պատրիարքին ու հասնում հաջողության. պատրիարքը հարում է նրանց տեսակետին: Պատմական հանգամանքները նույնպես նպաստում էին հարուցած խնդրի դրական լուծմանը. օսմանյան իշխանությունները հրահրում էին պատրիարքին՝ դիմել եվրոպական պետություններին՝ սլավոնական ժողովուրդներին «առանձնաշնորհյալ կացություն» տալու հիմքերով՝ նույնպիսի կարգավիճակ պահանջելով հայերի համար: Թուրքական քաղաքականությունը հայերին ևս պահանջատիրության մղելով՝ ակնկալում էր վերստին միջազգային ատյաններում մեջտեղ բերել ընդհանուր բարենորոգումների խնդիրը և այդպիսով հակազդել Բալկանների (իսկ Հայաստանում՝ հայերի) ինքնորոշման ձգտումներին: Մյուս կողմից, Սավֆեթ փաշայի թելադրած այս քաղաքականությունը հայերը կարող էին գործադրել իրենց օգտին, և պատրիարքը՝ քաջալերված օսմանյան բարենպաստ դիրքորոշումով, սկսեց գործել: Շնորհիվ այս բողոքների և դիմումների, նա կարողացավ դիվանագիտական հարաբերություններ պահպանել եվրոպական քաղաքական գործիչների հետ:

Եվ 1878 թ. փետրվարի 1/13-ին 9 բարձրաստիճան հոգևորականներ, որոնց թվում ինքը՝ Ներսես պատրիարքն էր նաև, Ալեքսանդր II-ին ներկայացրեցին մի աղերսագիր, որի շնորհիվ էլ բանակցությունների պայմաններից մեկը եղավ Հայկական հարցը: Նշելով, որ հայերն էլ ունեն այնքան իրավունք, որքան Թուրքիայի այլ քրիստոնյաները, և «Եթե Եվրոպական Թուրքիո գավառաց միևնույն ինքնօրեն վարչությունն, միևնույն երաշխավորություններով տրվի Հայոց հասարակության, այն ատեն նոցա… վախճան պիտի ստանան իրենց ընդ երկար նա-

[22] *Ատենագրություն Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1876, էջ 6:*

հատակությունքն»[23]: Սակայն թուրք լիազորները խոչընդոտեցին հեռուն գնացող այս կետի ընդգրկումը զինադադարի պայմանագրի մեջ:

1878 թ. հունվարի 31-ին Ադրիանուպոլսում ստորագրվել էր զինադադարի պայմանագիրը, որը պարունակում էր հաշտության հիմնական պայմանները և որի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Ռուսական կայսրության անմիջական շահերը նեղուցների՝ Բոսֆորի և Դարդանելի հարցում ու հրաժարվում էր Բուլղարիայի մի շարք քաղաքներից և Էրզրումից: Օսմանահպատակ սլավոններին տրվում էր քաղաքական ազատություն, և ստեղծվում էր բուլղարական իշխանապետություն: Բուլղարիայից դուրս էր բերվում օսմանյան բանակը, տեղական ինքնավարություն էր շնորհվում Բոսնիային, Հերցեգովինային և Օսմանյան կայսրության եվրոպական մասի մյուս քրիստոնյա հպատակներին: Սակայն արևելյան վիլայեթների քրիստոնյաների և առանձնապես հայերի մասին, որոնք տառապում էին թուրքական լծից, ոչ մի խոսք չէր ասվում: Կ. Պոլսի ղեկավար հայ շրջանները, տեղեկանալով այս պայմանների մասին, մեծ հիասթափություն ապրեցին: Դեռևս 1878 թ. հունվարի սկզբին Բ. Դուռը լիազորներ էր ուղարկել՝ բանակցելու հաշտության սկզբնական պայմանների վերաբերյալ: Ներսես պատրիարքը չհապաղեց Ադրիանուպոլիս ուղարկել առաջնորդական փոխանորդ Գևորգ վրդ. Ռուսճուգյանին, որը ներկայացավ Ն. Իգնատևին՝ խնդրելով հայերի համար նույնպիսի ինքնավարություն, ինչպիսին տրվելու է բուլղարներին: Սակայն Իգնատևը մատնանշեց այն փաստը, որ հայերը չեն կարող ստանալ նման ազատություն, քանի որ «հայք անպատրաստ գտնվեցան և Հայաստանի մեջ դարձած են մեռյալ տարերք» և ավելացրեց, որ երեք տարուց ի վեր ինքը զբաղվում է Հայոց դատի պաշտպանությամբ, բայց Կ. Պոլսի ողջախոհ գործիչները՝ սկսած Նուբար փաշայից, խոչընդոտել են նրա հայանպաստ գործողություններին[24]: Չնայած այդ իրողությանը, Իգնատևը հորդորեց հայերին՝ ի դեմս պատրիարքի, գործել ապագայում հարցի լուծման հույսով: Ազգային ժողովի ատենապետներ Ստեփան Ասլանյանը և Հովհաննես Նուրյանը պատրիարքի հանձնարարական նամակով մեկնեցին Ադրիանուպոլիս՝ ռուսական իշխանությունների հետ Հայաստանի ապագա կարգավիճակի շուրջ բանակցելու: Ազգանպաստ գործունեություն ծավալեց նաև Սարգիս Համամճյանը՝ արտաքին գործերի նախարարության ընդհանուր քարտուղարը, որը Սավֆեթ փաշայի (արտաքին գործերի նախարար) և Սաադուլլահ բեյի (Բեռլինի օսմանյան դեսպան) խորհրդականն էր: Երկու աղերսագիր կազմվեցին՝ ուղղված ռուսական կայսրին, և հանձնվեցին Իգնատևին, որը խոստացավ մեծ իշխանին՝ հրամանատարին, հաղորդել հայոց խնդիրը: Եվ Ալեքսանդր II-ը համաձայնություն տվեց ընդգրկել դաշնագրում հայերի համար այս անչափ կարևոր հարցը: Ն. Իգնատևը խորհուրդ տվեց շուտափույթ ծրագիր ներկայացնել հայ ժողովրդի «իրձերի և փափագի» մասին: Հայաստանի ինքնավարության վերաբերյալ այդպիսի ծրագիր Ներսես պատրիարքն արդեն պատրաստել էր: Հայ պատվիրակությունը, հենվե-

---

[23] *Լ. ե ռ. Հայոց հարցի վավերագրերը, էջ 57:*

[24] *Ս ա ր ո ւ խ ա ն. նշվ. աշխ., էջ 270:*

լով պատրիարքի ծրագրի վրա, կազմեց ևս մի ծրագիր՝ ազգային ինքնավարության, Հայաստանի հայաշատ գավառների համար՝ Մուշի, Վանի, Կարինի, Տիգրանակերտի և այլն, որը և արտացոլվեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածում: Ռուսաստանի պահանջով, հաղթության նախնական պայմանագիրն ստորագրվեց Սան-Ստեֆանոյում 1878 թ. մարտի 3-ին: Ռուսական կողմից այն ստորագրեցին Ն. Իգնատևը և Ա. Նելիդովը, իսկ թուրքական կողմից՝ Սավֆեթ փաշան և Սաադուլլահ բեյը:

Ռուս հետազոտող Ս. Չերնովը նշում է, որ «Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Ռուսաստանի դիվանագիտական հավատամքն էր Արևելյան հարցում՝ նրա պաշտոնական քաղաքական ծրագրի լուծումը»[25]: Ըստ Չերնովի՝ Թուրքիայի մասնատման հատուկ ծրագիր Ռուսաստանը չուներ: Ա. Գորչակովը բազմիցս նշել է, որ Կ. Պոլսի օկուպացիան չի մտնում Ռուսաստանի ոչ ռազմական, ոչ էլ քաղաքական ծրագրերի մեջ, և Ռուսաստանի ուշադրությունը բևեռված էր «թուրքերի իշխանության տակ գտնվող քրիստոնյաների թշվառ վիճակին վերջ դնելու անհրաժեշտության վրա, նաև վերջ դնելու այստեղից բխող մշտական ճգնաժամերին, որոնք ազդում են միջազգային հարաբերությունների, առևտրի, ֆինանսների և վարկերի վրա»[26]: Սակայն իրականում ցարական Ռուսաստանը ձգտում էր տիրանալ նոր շուկաների, նեղուցների, ձեռք բերել հումքի նոր աղբյուրներ՝ հետապնդելով շահադիտական հատուկ նպատակներ: Նա ոչ միայն ձգտում էր ամրապնդել իր դիրքերը Բալկաններում, այլ նաև իր ազդեցությունը տարածել Արևմտյան Հայաստանի վրա: Իր հերթին անգլիական դեսպան Լայարդը մշակել էր մի ծրագիր, որը ձեռնտու էր նաև օսմանյան իշխանություններին: Ելնելով այն դրույթից, որ Ռուսաստանը հայտարարել էր, թե պատերազմելով Թուրքիայի հետ նպատակ ունի ազատագրել քրիստոնյա ժողովուրդներին՝ հայերը պիտի խնդրեին Ռուսաստանին «Հայաստանի ազատությունը՝ Թուրքիայի հովանավորության տակ», ինչը ինքնին նշանակում էր, որ Հայաստանը մնալու էր Օսմանյան կայսրության սահմանների մեջ: Եվ Ներսես պատրիարքը մեկնում է Սան-Ստեֆանո՝ Ալեքսանդր II-ից ինքնավարություն խնդրելու Հայաստանի համար: Բայց Պետերբուրգից դրա վերաբերյալ հրահանգ չէր ստացվել: Մեծ էր նաև թուրք լիազորների ընդդիմությունը հարցի կարգավորման առումով: Խոչընդոտեց նաև Անգլիան, և Հայաստանի ինքնավարության հարցը մեջտեղից դուրս եկավ: Այսպիսով, փորձառու Ն. Իգնատևը մերժեց հայերի խնդրանքը, դրա փոխարեն Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի մեջ ընդգրկվեց «տեղական պահանջներից բխող ռեֆորմների» վերաբերյալ կետը. «Ելնելով այն բանից, որ ռուսական զորքերի հեռանալը Հայաստանի՝ իրենց գրաված այն տարածքներից, որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, այնտեղ կարող էր երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա բացասաբար անդրադարձող բախումների և բարդությունների առիթ դառնալ, Բ.

---

[25] С. Л. Ч е р н о в. К вопросу о Сан-Стефанском договоре 1878 г.– “История СССР”, 1975, № 6, с. 136.

[26] *Նույն տեղում:*

Դուռը պարտավորվում է առանց հապաղելու, հայերով բնակեցված մարզերում տեղական պահանջներից բխող բարելավումներ և բարոփոխումներ իրականացնել և ապահովել վերջիններիս անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[27]: Սակայն պարզ չէր, թե ի՞նչ միջոցներով պիտի իրագործվեր այս գթասիրտ որոշումը: Մեծ էր արևմտահայության հիասթափությունը, խորտակված իղձերի դառնությունը: Ներսես պատրիարքը գիտակցում էր, որ իր կողմից ձեռնարկած ջանքերը չպսակվեցին հաջողությամբ: «Քաղաքականության մեջ երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պետք է ընես ինչ որ կրնաս,– արդարանում էր նա:– Այս հոդվածի ուժովը քրդերուն և չերքեզներուն հարստահարությանց դեմ ապահովյալ էին հայք. իրենց տասը տարիե ի վեր արձակած աղաղակը վերջապես արձագանք կգտներ ու մեր հանուն ազգին ներկայացված խնդրո մեկ մասը կլուծվեր ըստ սկզբան: Այլ մեր ազգային խնդիրը՝ Արևելյան ընդհանուր խնդրույն հետ նոր կերպարանք ու նշանակություն առած էր»[28]:

Երբ հայ պատվիրակները հայտնեցին իրենց դժգոհությունը Իգնատևին, նշելով, որ շատ քիչ է պահանջվել հայերի համար, Իգնատևը հայտարարեց, որ արևմտահայերը իրավասու չեն ռուսներից ավելին պահանջել, պարզապես պետք է իրատես լինել և բավարարվել նրանով, ինչ որ հնարավոր է ձեռք բերել պատմական այս փուլում, ավելացնելով, որ համենայն դեպս, եթե Ռուսաստանին հաջողվի համաձայնության գալ թուրքերի հետ պայմանագրում առաջարկված հոդվածի առումով, ապա դա կապահովի Ռուսաստանի պաշտոնական հովանավորությունը նրանց նկատմամբ[29]: Իգնատևը կարևորում էր այն փաստը, որ առաջին անգամ Հայաստանի անունը նշվում էր միջազգային պայմանագրում, և առաջին անգամ Բ. Դռան վրա պարտավորություն էր դրվում անհապաղ բարելավել հայերի կացությունը՝ փրկելով նրանց քրդերի ու չերքեզների կամայականություններից:

Հայաստանի աշխարհագրական դիրքը խոչընդոտում էր Ռուսաստանի հովանավորության տակ ստեղծել հայկական ինքնավարություն, քանի որ դա հակասում էր ոչ միայն Թուրքիայի, այլև Ռուսաստանի մշտական ախոյան՝ Անգլիայի քաղաքական շահերին: 16-րդ հոդվածը իբրև միջազգային փաստաթուղթ, որը որոշակի իրավունքներ պիտի տար հայերին, բավական առաձգական էր և անորոշ, սակայն, ինչպես նկատել է Լեոն, Ն. Իգնատևը «…16-րդ հոդվածը գրել է ոչ թե թուրքահայերի, այլ ռուսական դիվանագիտության համար»[30]: Այլ կարծիքի էր Գր. Արծրունին, որի տեսակետը խիստ քննադատում էր Լեոն. «Տեղական պետքեր» կախարդական խոսքերի մեջ [Արծրունին] իսկույն դրեց այն բովանդակությունը, որ «գաղութահայ ինտելիգենտական ազգասիրության իդեալն էր կազմում»[31], եզրակացնելով, որ տեղական պահանջները նշանակում է, որ Հա-

---

[27] Ю. В. Ключников, А. Сабанин. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. I, М., 1925, с. 222.

[28] *Սարգսյան. նշվ. աշխ., էջ 294:*

[29] Н. П. Игнатьев. Сан-Стефано.– “Исторический вестник”, 1915, июль.

[30] *Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, հ. Ա, էջ 76:*

[31] *Նույն տեղում, էջ 79:*

յաստանը ունենալու է նախագահական ինքնավարություն: Պարզապես, Արծրունին ցանկալին ընկալում էր իբրև իրականություն:

Պայմանագրի մի մասն անդրադառնում էր Բալկանյան թերակղզուն, իսկ մյուսը՝ Փոքր Ասիային: Թուրքիան ճանաչում էր Սերբիայի և Ռումինիայի անկախությունը: Նրանում տեղ գտան Բոսնիայում և Հերցեգովինայում անցկացվելիք համապատասխան բարենորոգումները: Դաշնագրի համաձայն, ստեղծվում էր Բուլղարական պետություն, և Չեռնոգորիան վերջնականապես ազատագրվում էր օսմանյան տիրապետությունից: Բանակցությունների խրթին հանգույցն էր կազմում Արևմտյան Հայաստանի մի շարք մարզերի՝ Կարսի, Արդահանի, Բայազետի և Ալաշկերտի հարցը, նաև Բաթումի որոշ շրջանների խնդիրը: Թուրքիան հատկապես պայքարում էր Կարսի, Արդահանի, Բայազետի նաև Բաթումի համար: Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին էին անցնում Բաթումը, Կարսը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Օլթին, Արդանուշը, Արդվինը, Կաղզվանը, Խամուրը:

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածն ամենևին կապ չուներ Ադրիանուպոլսի խմբագրված սկզբնական հոդվածի հետ, որտեղ ասվում էր. «Վարչական ինքնօրինություն տալ Կովկասի սահմանակից հայաբնակ գավառներուն»: Այս կարևորագույն կետը փոխարինվեց «տեղական պետքերի պահանջած բարվոքումներով և բարենորոգումներով»: Միանգամայն հասկանալի է, թե ինչու օսմանյան կառավարությունը խիստ դիմադրեց հայկական ինքնավարությանը: Ինչպես արդեն նշվեց, ինքնավարություն հաստատել Հայաստանում, որտեղ մեծ թվով մահմեդական բնակչություն կար, ցանկալի չէր օսմանյան կառավարությանը և այլադավան ժողովուրդներին: Բացի այդ, Հայաստանի աշխարհագրական դիրքն այնպիսին էր, որ ռուսական հովանավորության տակ ստեղծվող հայկական ինքնավարությունը հակասում էր Ռուսաստանի մշտական ախոյան՝ Անգլիայի քաղաքական շահերին:

Դաշնագիրը բաղկացած էր 29 հոդվածից: Բացի 16-րդ հոդվածից, Հայկական հարցին էին վերաբերում նաև 25-րդ և 27-րդ հոդվածները: 25-րդ հոդվածում արծարծվում էր Ռուսաստանի զորքերի դուրս բերման հարցը Արևմտյան Հայաստանից վեց ամսվա ընթացքում: Իսկ 27-րդ հոդվածը պարտադրում էր օսմանյան կառավարությանը՝ չձեռնարկել պատժիչ միջոցներ այն անձանց նկատմամբ, որոնք պատերազմի ընթացքում աջակցել են ռուսական բանակին և «եթե ոմանք իրանց ընտանիքներով ռուսական զորքին կցվելով երկրից (Թուրքիայից) հեռանալ ուզեն, օսմանյան իշխանությունները նրանց մեկնելուն պիտի չընդդիմանան»[32]: 27-րդ հոդվածի այս երկու կետերն էլ միանշանակ կարևոր էին, քանի որ հայ բնակչության ստվար մասը մեծ համակրանքով էր ընդունում ռուսական բանակին, որը, նրա պատկերացմամբ, գալիս էր պաշտպանելու օսմանյան լծի տակ տառապող հարստահարված քրիստոնյաներին: Հայերի բարեկամական տրամադրվածությունն ու համակրանքը ռուսների նկատմամբ կարող էին դառնալ

[32] *Ս ա ր ո ւ խ ա ն. նշվ. աշխ., էջ 291:*

նոր բռնությունների ու հալածանքների աղբյուր, և «ռուսների քաշվելուց հետո նոր կոտորած և հալածանք կսկսվեր նույն տեղերում հայերի դեմ»[33]:

Այսպիսով, ըստ պայմանագրի 16-րդ հոդվածի, ռուսական զորքերը պետք է մնային Հայաստանում այնքան ժամանակ, մինչև Բ. Դուռը չիրագործեր բարեփոխումներ, իսկ 25-րդ հոդվածը լրացնում էր 16-րդ հոդվածն այն առումով, որ ռուսական զորքերը դուրս կբերվեն Փոքր Ասիայի սահմաններից վեց ամսվա ընթացքում՝ պայմանագիրը կնքելուց հետո: Այսինքն՝ ռուսական զորքերը, փաստորեն, կարող էին գտնվել Թուրքիայում անսահմանափակ ժամանակահատվածում՝ մինչև խոստացած բարեփոխումների իրականացումը[34]: Հայաբնակ թուրքական մարզերի նկատմամբ միայն Ռուսաստանն էր ձեռք բերում իրական պրոտեկտորատ[35]:

16-րդ հոդվածն արդեն պատմական իրողություն էր դարձել, երբ մարտի 15-ին Խորեն արքեպիսկոպոս Նար-Պեյը (որը Ներսես պատրիարքի հանձնարարությամբ Պետերբուրգ էր ուղևորվել) Ալեքսանդր II-ին ներկայացրեց պատրիարքարանում մշակված մի ծրագիր՝ 10 կետից բաղկացած, որոնք վերաբերում էին հետևյալ հարցերին. ա) Հայաստանը պետք է ունենա մի ընդհանուր կառավարիչ՝ հայազգի մարզպան ու վալի, որը պիտի ընտրվի սուլթանի կողմից Ռուսաց կայսեր «համահաճությամբ»: Ընդ որում, ընդհանուր կառավարիչը պիտի ունենար գործադիր իշխանության բոլոր գործառույթները, հավաքեր տուրքերը, նշանակեր դատավորներին, գումարեր և նախագահեր ընդհանուր ժողովը: Պիտի հաստատվեր կենտրոնական վարչական ժողով, որի նախագահը պիտի լիներ ինքը՝ ընդհանուր կառավարիչը: Նահանգը պիտի բաժանվեր սանջակների (գավառ), վերջիններս էլ՝ գավառակների (նահիե), որոնց կառավարիչներն էլ պիտի նշանակվեին ընդհանուր կառավարչի կողմից: բ) Հայաստանում պետք է գործեին հայազգի կուսակալներ և գավառապետեր, որոնք պիտի ընտրվեին երեսփոխանական ժողովի կողմից և հաստատվեին Բ. Դռնից: գ) Պիտի ստեղծվեին դատարաններ հայ դատավորների նախագահությամբ: դ) Վերացվեին քրդերի և դերեբեյների արտոնությունները: ե) Արդարության հիմունքների վրա պիտի դրվեր և նորացվեր հարկերի բաշխումը: զ) Պահանջվում էր «զինաթափություն տաճկաց» և այլն: Նախատեսվում էր կրոնի բացարձակ ազատություն: Նար-Պեյի ծրագրի հետ մեկտեղ կազմվեց «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի», որտեղ մշակված էր հայկական նահանգներին

---

[33] *Նույն տեղում, էջ 292: Հայերը ամենուրեք մեծ ոգևորությամբ էին դիմավորում ռուսական բանակին. «Նորին կայսերական բարձրություն՝ Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին մի քանի ոչխար նվիրաբերեցին, որոնք, համաձայն արևելյան սովորույթի, պիտի զոհաբերվեին հանուն ռուսական զենքի հաջողության», «Դեպի Ղրզբլ-չախ-չախ և Ղրզբլ-քիլիսա տանող ճանապարհների հատման մասում հարևան գյուղերի հայ հոգևորականությունը դիմավորում էր ռուսական զորքին, իր աղոթքը ուղղելով ազատագրող (ռուսական) արքային, որն իր սուրն էր մերկացրել ի պաշտպանություն հարստահարված քրիստոնյաների»* (С. О. К и ш м и ш е в. Война в Турецкой Армении, 1877-1878 гг. СПб., 1884, с. 12, 13)*:*

[34] Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., 1896, с. 195.

[35] *Նույն տեղում, էջ 39: Հարկ է նշել, որ Ռուսաստանը ձգտում էր Հայաստանը միացնել իրեն, այլ ոչ թե ստեղծել հայկական պետություն:*

վերաբերող ինքնավարություն: Այս ծրագիրը Խրիմյան արքեպիսկոպոսի և նրա քարտուղար Մինաս Չերազի միջոցով ուղարկվեց եվրոպական 6 տերությունների կառավարություններին՝ նախքան Բեռլինի կոնգրեսի գումարումը: Ծրագրին կից Ներսես պատրիարքը ներկայացրեց առանձին մի հիշատակագիր, որտեղ ապացուցում էր Հայաստանին ինքնավարություն տալու անհրաժեշտությունը, նաև Հայաստանի վիճակագրությունն ու Հայաստանի քարտեզը: Վերոհիշյալ ծրագրերը խիստ կարևոր վավերագրեր էին, քանզի միջազգային հանրությանը՝ մասնավորապես Եվրոպային, ներկայացվում էին հայ ժողովրդի քաղաքական միտքը և «իդեալները»[36]:

Սան-Ստեֆանոյում ստորագրված պայմանագիրը նախնական էր. կողմերը եկան համաձայնության, որ այն պիտի քննարկվի մեծ տերությունների կողմից «ոչ թե անվերապահորեն համաձայնելու և ընդունելու նպատակով, այլ ուսումնասիրելու՝ թե որ կետերը կարող են ընդունվել և որոնց կարող են աջակցել տարբեր տերություններ, նաև որ կետերը չեն կարող ընդունվել»[37]: Փաստորեն, Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Ռուսաստանին որոշակի արտոնություններ էր տալիս, իսկ վերջինիս արտոնյալ դիրքը անընդունելի էր Անգլիայի համար: Եվ Անգլիան չի հապաղում հայտարարել դրա մասին 1878 թ. մայիսի 30-ի հուշագրում. «Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրով Հայաստանի վերաբերյալ տրված խոստումները պիտի վերաբերեն ոչ միայն Ռուսաստանին, այլև՝ Անգլիային»[38]: Բեռլինի կոնգրեսից առաջ կնքվում է անգլո-թուրքական համաձայնագիրը, որի առաջին հոդվածը հռչակում է. «Նորին կայսերական մեծությունը՝ սուլթանը խոստանում է Անգլիային կատարել անհրաժեշտ բարեփոխումներ, որոնց վերաբերյալ հետագայում համաձայնություն կկնքվի երկու պետությունների միջև՝ կառավարման [ոլորտի] բարեփոխման նպատակով, և Բ. Դռան քրիստոնյաներին և այլ հպատակներին՝ Հայաստանի այս մարզերում պաշտպանելու նպատակով: Որպեսզի Անգլիային հնարավորություն տրվի անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ կատարելու իր վրա վերցրած պարտավորությունները (պետք է հասկանալ՝ Հայաստանի պաշտպանությունը Ռուսաստանից – Գ. Հ.), Նորին կայսերական մեծություն սուլթանը համաձայնություն է տալիս Անգլիային Կիպրոսը օկուպացնելու և [Անգլիայի կողմից] կառավարվելու վերաբերյալ»[39]: Անգեն աչքով երևում է, որ դիվանագիտական այս բարդ խաղերում Հայաստանը և հայերն առևտրի առարկա էին դարձել, և հայերի իրավունքների պաշտպանությունը ու ազատագրումը չէր մտնում ո՛չ եվրոպական տերությունների, ոչ էլ Ռուսաստանի ծրագրերի մեջ, պարզապես նրանք շահարկում էին Հայաստանի հարցը՝ սեփական նպատակներին հասնելու համար: Անգլիան

---

[36] *Բեռլինի կոնգրեսի նախօրյակին մեծ տերություններին հանձնվեց նաև մի այլ ծրագիր, որը կազմել էր հայազգի պետական խոշոր գործիչ Նուբար փաշան: Ծրագիրն ընդգրկում էր նախորդ ծրագրի հիմունքները, պարզապես «մի շարք մեղմացումներով» (Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 117):*

[37] Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, с. 38.

[38] *Նույն տեղում, էջ 39:*

[39] *Նույն տեղում, էջ 271:*

պատրաստ էր պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքները Ռուսաստանից՝ հանուն Կիպրոսի: Հետագայում Անգլիան ժխտում էր Փոքր Ասիայի բնակչության նկատմամբ իր ստանձնած պարտավորությունները[40]:

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը կարևոր հանգամանք էր և մի վճռական քայլ Հայկական հարցի լուծման գործում: Այդ պայմանագրի համաձայն, Արևմտյան Հայաստանի մի զգալի մասը՝ Կարակուրգանից մինչև Արաքս գետը ընկած տարածքը, անջատվեց Օսմանյան Թուրքիայից և միացավ Ռուսաստանին: Ռուսաստանին միացավ նաև Բաթումի մարզը: Ռուսական բանակը պետք է մնար Արևմտյան Հայաստանի՝ իր կողմից գրաված տարածքներում, մինչև որ թուրքական կառավարությունը կենսագործեր պայմանագրով նախատեսված բարեփոխումները:

Ռուսաստանի այս հաջողությունները խուճապ առաջացրեցին արևմտյան մեծ տերությունների դեկավար շրջաններում, որոնք անհապաղ միջոցներ ձեռնարկեցին՝ նրան այդ նվաճումներից զրկելու ուղղությամբ: Անգլիան եվրոպական պետությունների, հատկապես Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի հետ, մի ընդհանուր ճակատ էր կազմել Ռուսաստանի դեմ և պահանջում էր միջազգային կոնգրես հրավիրել՝ Թուրքիայի հետ կնքած հաշտության պայմանագիրը վերանայելու և փոփոխելու նպատակով, քանի որ ռուս-թուրքական հաշտության պայմանների շուրջ ծավալվել էր դիվանագիտական բարդ պայքար:

Ծավալվեց հակառուսական մեծ քարոզչություն, որի առաջապահը դարձավ Անգլիան ի դեմս լորդ Բիքոնսֆիլդի, որը հակված էր մինչև վերջ պաշտպանել Թուրքիային՝ Ռուսաստանը համարելով Անգլիայի գլխավոր ախոյանը Մերձավոր Արևելքում: Բիքոնսֆիլդը օժանդակություն էր ակնկալում Բիսմարկից, որը նույնպես ձգտում էր խոչընդոտել Ռուսաստանի ազդեցության տարածմանը: Անգլիան և Ավստրո-Հունգարիան անգիջում դիրք էին բռնել Սան-Ստեֆանոյի պայմանագրի կիրարկման հարցում, և այդպիսով հնարավոր էին դարձնում պատերազմի բռնկումը Անգլիայի, Ավստրիայի և Ռուսաստանի միջև, ինչի համար էլ Անգլիան դժվարացնում էր կոնգրեսի գումարումը Բեռլինում:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման անհրաժեշտությունն անգլիական դիվանագիտությունը պայմանավորում էր հետևյալով. Անգլիան դեմ էր, որ Բաթումը դառնար ռուսական ռազմածովային բազա, անթույլատրելի էր համարում ռուսական ազդեցության տարածումը Եփրատի հովտի վրա ու նաև առարկում էր, որ Տրապիզոն-Պարսկաստան առևտրական ճանապարհն անցներ ռուսական վերահսկողության ներքո: Անգլիային ամենևին չէր հետաքրքրում հայերի ծանր կացությունը: Չափազանց մեծ էր Տրապիզոն-Բայազետի վրայով անցնող անգլիական առևտրի ծավալը, և պետք էր այս քարավանային ճանապարհը զերծ պահել Ռուսաստանի հսկողությունից: Անգլիան սպառնում էր զավթել Եգիպտոսն ու Կիպրոսը՝ Հայաստանը Ռուսաստանի կողմից գրավվելու դիմաց:

1878 թ. փետրվարի 5-ին, նախքան Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումը, Ավստրո-Հունգարիան նոտա հղեց այն տերություններին, որոնք ստորագրել էին

---

[40] *Նույն տեղում, էջ 46:*

1856 թ. Փարիզի դաշնագիրը և 1871 թ. Լոնդոնյան համաձայնագիրը՝ առաջարկելով Վիեննայում հրավիրել եվրոպական կոնֆերանս, որտեղ պետք է քննարկվեին ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ծագած վիճելի հարցերը: Ռուսաստանի կանցլեր Գորչակովը մերժեց այդ առաջարկը և դիմեց Բիսմարկին, որպեսզի նա հանդես գա «ազնիվ միջնորդի» դերում: Այս քայլով Գորչակովը ձգտում էր կանխել ավստրո-անգլիական մերձեցումը, սակայն Բիսմարկը հայտարարեց, որ Գերմանիան ոչ մեկին չի պարտադրի իր տեսակետը և չի դառնա իրավարար, սահմանափակվելով լոկ ազնիվ միջնորդի դերով: Բիսմարկը ընդգծում էր, որ Արևելյան հարցում Գերմանիան չունի անմիջական շահագրգռվածություն: Անգլիան և Ռուսաստանը շարունակում էին ակտիվ բանակցել: Քաղաքական աշխարհը հետևում էր նրանց գործողություններին, որոնք կարող էին ավարտվել պատերազմով:

Սակայն Ռուսաստանը թե՛ ֆինանսապես, թե՛ ռազմականապես պատրաստ չէր պատերազմելու Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի դեմ: «Ռուսաստանն այն ժամանակ՝ 1878 թ., հակված չէր պատերազմ սկսել Ավստրիայի և Անգլիայի դեմ, քանի որ նա ուշացրեց Կ. Պոլսի և նեղուցների գավթումը,– գրում է Բիսմարկը: – Ես ծանր հիվանդ էի, և միայն Պ. Շուվալովի կողմից ինձ հաղորդված Ալեքսանդր II-ի ցանկությունը ստիպեց ինձ պատրաստել և գումարել կոնգրեսը (Բեռլինում – Գ. Հ.)»[41]: Իհարկե, Բիսմարկը լռում էր այն մասին, որ բազմիցս խոստացել էր Ռուսաստանին՝ պաշտպանել նրան Ավստրիայի և Անգլիայի «թշնամական կոալիցիայից»: Նա թաքցնում էր նաև այն փաստը, որ «դրդելով Ռուսաստանին գրավել Կ. Պոլիսը, նա (Բիսմարկը – Գ. Հ.) թակարդ էր պատրաստում Ռուսաստանի համար՝ միաժամանակ հորդորելով Անգլիային գրավել Կ. Պոլիսը դեռ 1876 թ. վերջում»[42]: Հետագայում Գորչակովին փոխարինած Ն. Գիրսը նշում էր, որ «ինքը Ալեքսանդր II-ի հրամանով հանձնարարական տվեց կոմս Պ. Շուվալովին՝ խնդրել Բիսմարկին կոնգրես գումարել Բեռլինում, որպեսզի Ռուսաստանը փրկվի այդ դիլեմայից՝ կամ պատերազմել Անգլիայի և Ավստրիայի դեմ, կամ անվերապահորեն նահանջել»[43]: Եվ կոմս Շուվալովը Բեռլին մեկնելուց առաջ ստացավ Ալեքսանդր II-ի հանձնարարականը. «Կոմս Շուվալով, հիշեք, որ գլխով եք պատասխանատու խաղաղության համար»[44]: Ելնելով այս հանգամանքներից՝ Գորչակովը և Շուվալովը բավական խղճուկ դեր էին խաղալու ապագա կոնգրեսում, իրենց անզորությունը պաճուճելով գունեղ արտահայտություններով և ամպագոռգոռ ճառերով:

1878 թ. մայիսի 30-ին Շուվալովը Լոնդոնում կնքեց գաղտնի անգլո-ռուսական համաձայնագիր, որով Ռուսաստանը հրաժարվում էր Ալաշկերտի հովտից և Բայազետից ու համաձայնում էր, որ հայերի նկատմամբ հովանավորությունն իրականացվեր ոչ թե միայն Ռուսաստանի, այլև եվրոպական տերությունների

---

[41] Ֆ. Ա. Ր ո տ ш т е й н. Международные отношения в конце XIX века. М.– Л., 1960, с. 86.

[42] *Նույն տեղում:*

[43] *Նույն տեղում:*

[44] *Նույն տեղում:*

կողմից՝ պարտավորվելով իր սահմանները չընդլայնել և չտարածել դեպի Ասիական Թուրքիայի խորքը:

Նշված գաղտնի համաձայնագիրը կիսով չափ սահմանափակում էր Ռուսաստանի՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրով ընձեռած օգուտները: Փաստորեն, Բեռլինի կոնգրեսը Եվրոպայի համաձայնությամբ ձնակերպելու էր անգլո-ռուսական համաձայնագրի արդյունքները:

Այս իրադարձություններով էր նշանավորվում Բեռլինի վեհաժողովի նախաշեմը:

Միաժամանակ անգլիական կառավարությունը գաղտնի բանակցություններ էր սկսել Թուրքիայի հետ, և նախքան վեհաժողովի բացումը տեղի ունեցավ ևս մի նշանավոր իրադարձություն. 1878 թ. հունիսի 4-ին կնքվեց վերոհիշյալ անգլո-թուրքական համաձայնագիրը, որով Կիպրոսը տրվում էր Անգլիային և Փոքր Ասիայի վրա հաստատվում էր անգլիական պրոտեկտորատ: Փոխարենը Անգլիան պարտավորվում էր պաշտպանել սուլթանի ասիական տիրույթները հյուսիսային հարևանի՝ այսինքն՝ Ռուսաստանի ոտնձգություններից: Այս դաշինքով Անգլիան փորձում էր «չեզոքացնել Ռուսաստանի դերը» աշխարհի քաղաքական պայքարում:

Այս երկու համաձայնագրերը երկար տարիների ընթացքում որոշեցին ուժերի հարաբերակցությունը Փոքր Ասիայում և մեծ դեր խաղացին հայկական բարեփոխումների հետագա ճակատագրում: Հիմա արդեն Անգլիան պատրաստ էր մասնակցել Բեռլինի կոնգրեսին: Ֆ. Ռոթշթեյնի բնութագրմամբ՝ «Թուրքական կայսրության գոյությունը, որտեղ այնքան շատ անգլիական կապիտալներ էին ներդրված, ավելացրեց Բրիտանիայի տիրույթների թիվը, …առանց որևէ կրակոցի, ոչ այնքան թանկ թատերական ներկայացման միջոցով»[45]:

Այսպիսով, քաղաքական շահախնդրությունը պայմանավորում էր «Սոլսբերիի և անգլիական մյուս գաղութակալ պարագլուխների» գործողությունները, իսկ վերջիններիս համար «գրոշի արժեք չունեին հայ ժողովրդի կենսական շահերը»[46]: Ռուսաստանը ևս շահագրգռված էր իր հաղթանակի գոնե նվազագույն պտուղները պահպանելու հարցում, որտեղ հայության շահերը նույնպես որևէ արժեք այլևս չէին կարող ունենալ: Անգլիայի հետ համաձայնություն կայացնելուց հետո ռուսական կառավարությունը նորից դիմեց Բիսմարկին կոնգրես հրավիրելու հարցով, և նա հավանություն տվեց:

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, իրականում ոչինչ չտալով հայ ժողովրդին այն ամենից, ինչ նա ակնկալում էր, այնուամենայնիվ որպես ելակետ էր ընդունում 2 փաստ՝ տեղական կարիքներից բխող բարեփոխումներ և հայերի անվտանգության ապահովումը քրդերից ու չերքեզներից: Հայ ժողովրդի ճակատագրին առնչվող այս երկու փաստերի արձանագրումը միջազգային պայմանագրում ինքնին կարևոր էր, քանի որ «այս կրկնակի փաստին համապատասխանում էր

---

[45] *Նույն տեղում, էջ 30:*

[46] *Ջ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան, 1978, էջ 179:*

կրկնակի միջազգային պատասխանատվություն, որը պիտի կրեր Թուրքիան Ռուսաստանի նկատմամբ» և «որը պիտի իրագործեր առանց հապաղելու»[47]: Սակայն Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում չէին արծարծվում այն միջոցները և ուղիները, որոնց շնորհիվ Ռուսաստանը ի զորու պիտի լիներ հետևել ու վերահսկել այդ պարտավորության կատարումը: Եվ այդ բացը փորձեց լրացնել Բեռլինի վեհաժողովը, որի խնդիրն էր «Սան-Ստեֆանոյի թուրք-ռուսական պայմանագիրը… փոխարինել թուրք-եվրոպական տրակտատով»[48], որը պիտի ապահովեր թուրքահպատակ հայ քրիստոնյաների իրավունքների պաշտպանությունը եվրոպական տերությունների միացյալ երաշխիքով: Բեռլինի տրակտատը առաջ էր քաշելու Թուրքիայի միջազգային պարտավորությունների հարցը: 16-րդ հոդվածի համաձայն միայն Ռուսաստանն իրական պրոտեկտորատի իրավունք ուներ հայաբնակ թուրքական գավառների նկատմամբ: Եվ Բեռլինի վեհաժողովը նպատակ ուներ զրկել Ռուսաստանին այդպիսի արտոնություններից:

Պատմական այս իրադարձությունների բերումով մինչ այդ անպաշտպան հայ ժողովուրդը ձեռք բերեց «երկու հովանավոր… դժբախտաբար, երկուսն էլ մրցակիցներ էին, որոնք կարող էին… թշնամիներ դառնալ՝ ի վնաս նրանց, ում պիտի պաշտպանեն»[49]: Հատկապես Անգլիան ոչինչ չարեց իր ստանձնած պարտավորությունների ուղղությամբ: Լինելով շահագրգիռ կողմ՝ Անգլիան պնդում էր, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը անհապաղ վերանայվի Բեռլինի կոնգրեսում:

«Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, եթե մենք թույլ տված լինեինք, կապահովեր հայերի մշտական ապահովությունը… Դաշնագրի անմիջական արդյունքը այսպես է նկարագրել դուքս Արգայլը. «Մենք ի՞նչ արեցինք: Մենք զայրացած էինք, մենք նախանձում էինք և կրճտացնում մեր ատամները… մենք որոշեցինք ծախսել 6.000.000 ֆունտ սթերլինգ, որպեսզի զինվենք… նավատորմ ուղարկեցինք Դարդանել և խարիսխ գցեցինք Իշխանաց կղզիների մոտ…»[50],– գրում է Խ. Լինչը՝ հավելելով, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը հակադրվում էր 1856 թ. Փարիզի դաշնագրին, ինչը և հիմնական առիթ ծառայեց, որպեսզի «թուրքական գործերը» լինեն ոչ միայն Ռուսաստանի, այլև եվրոպական բոլոր պետությունների մտահոգության առարկան: Ըստ Լինչի՝ ոչ ոք չի տարակուսում, որ Անգլիան՝ իր վրա վերցնելով Բեռլինի կոնգրեսի նախաձեռնությունը, աջակցեց այն իրողությանը, որ հայերը զրկվեցին իրենց միակ պաշտպանից (Ռուսաստանից), ինչն ավելի արդյունավետ էր հայերի համար: Այսպիսով, «Անգլիան եղավ եթե ոչ բացառիկ, ապա, իհարկե, առաջին և հատուկ պատասխանատուն»[51]:

Ամփոփելով վերը շարադրված քաղաքական իրադարձությունների արդյունքները՝ կարելի է փաստել.

---

[47] Р о л е н - Ж е к м е н. Армения, армяне и трактаты.– Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, с. 37.

[48] *Նույն տեղում:*

[49] *Նույն տեղում, էջ 39:*

[50] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 411, ց. 1, գ. 234, թ. 2:*

[51] *Նույն տեղում:*

1. Թուրքիայի հետ հարաբերություններում Ռուսաստանի քաղաքականության մեջ Հայկական հարցը վերածվեց քաղաքական գործոնի: Սան-Ստեֆանոյում այդ քաղաքականությունը Ռուսաստանի համար մենաշնորհ իրավունք էր նշանակում, այսինքն՝ Հայկական հարցը միջազգայնացվում էր զուտ ռուս-թուրքական շրջանակներում:

2. Ռուսական հակամարտությունն ունեցավ իր նշանակությունը Թուրքիայում Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը նաև Հայկական հարցի ձևով իրավականորեն ամրագրելու գործում: Հայկական հարցի ռուսական մենաշնորհի վերացումը դարձավ նշանախեցերից մեկը Անգլիայի կողմից Փոքր Ասիայում իր ներկայությունն ամրապնդելու համար:

3. Առաջիկայում Կիպրոսի օկուպացումը Անգլիայի կողմից Թուրքիայի արևելյան վիլայեթների պաշտպանության փոխհատուցումն էր: 1878 թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական համաձայնագիրը, փաստորեն, Փոքր Ասիայում և Միջերկրածովյան ավազանում Անգլիայի քաղաքագիտության նվաճումների իրավական ամրապնդումն էր ի վնաս Ռուսաստանի:

4. Անգլիայի դիվանագիտությունը վերստին ապացուցեց իր ճկունությունը Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի, Ռուսաստանի և Գերմանիայի (տակավին մինչև վերջ չհասունացած) հակասություններն օգտագործելու իմաստով: Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի հակամարտությունը Բալկաններում, Ռուսաստանի և Գերմանիայի մոտալուտ հակասությունները Մերձավոր Արևելքում և Թուրքիայում ավելի էին սրելու միջազգային իրադրությունը 1870-ական թվականներին: «Ազնիվ մակլերի» խորաթափանցությունն ակնառու էր Մերձավոր Արևելքում իր ամենահավանական ախոյանի՝ Ռուսաստանի ճանապարհը փակելու տեսակետից:

5. Վերոհիշյալ օբյեկտիվ հանգամանքների ամբողջությունն էլ պայմանավորեց եվրոպական տերությունների կողմից Ռուսաստանը մեկուսացնելու և Հայկական հարցում կոլեկտիվ պատասխանատվությունը՝ իրականում այդ հարցի լուծմանը կոլեկտիվ ուժերով խոչընդոտելու քաղաքականությունը:

6. Հիմնավոր չեն այն կարծիքները, թե իբր Ռուսաստանը չկարողացավ օգտագործել իր հաղթանակի պտուղները Թուրքիայի հետ պատերազմում (1877–1878 թթ.): Այդպիսի կարծիքը ստեղծում է այն պատրանքը, թե հզոր Ռուսաստանն ուներ ապաշնորհ դիվանագիտություն, որի մեղքով տանուլ էր տալիս իր ռազմական հաղթանակները միջազգային հարաբերություններում: Մինչդեռ հակառակն է. Ռուսաստանը տնտեսապես ու ռազմականորեն թույլ էր եվրոպական հնարավոր դաշինքի դեմ պայքարելու ասպարեզում, իսկ նրա դիվանագիտությունը ճկուն էր ու շնորհալի՝ այդ անզորությունն իբրև խաղաղասիրություն մատուցելու արվեստում: Ռուսաստանը լավ էր գիտակցում իրեն սպառնացող մեկուսացումը:

7. Սան-Ստեֆանոյին հաջորդած դիվանագիտական և քաղաքական իրադարձությունները նախապատրաստեցին Հայկական հարցի ձախողումը Բեռլինի կոնգրեսում: Քչի և ոչնչի միջև Ռուսաստանը պետք է նախընտրեր քիչը, իսկ Հայկական հարցը տարրալուծվելու էր հենց այդ ոչնչի մեջ:

РУССКО-ТУРЕЦКАЯ ВОЙНА 1877-1878 ГГ. И АРМЯНСКИЙ ВОПРОС В САН-СТЕФАНСКОМ ДОГОВОРЕ

ГЕВОРК АРУТЮНЯН

Р е з ю м е

Предоставление самоуправления балканским славянам при содействии России в 1876 г. в конечном счете привело к углублению Восточного кризиса и русско-турецкой войне 1877-1878 гг. Победоносно завершив войну, Россия готовилась на предстоящей мирной конференции выступить с предъявлением своих политических претензий в отношении Западной Армении и малоазиатских территорий. В итоге установились определенные отношения между представителями российской дипломатии, армянским патриархом Н. Варжапетяном и иными армянскими представителями, которые, по примеру балканских народов, выдвигали вопрос самоуправления западных армян. Именно этот вопрос и не был учтен в Сан-Стефанском прелиминарном договоре, 16-я статья которого в условиях русского военного присутствия обязывала В. Порту осуществить соответствующие реформы в армянонаселенных областях Турции и обеспечить безопасность армян от курдов и черкесов. В противовес 16-й статье 15 марта 1878 г. западные армяне представили Александру II программу самоуправления Западной Армении, которая не имела никакого международного резонанса, равно как и программа Нубара паши в преддверии Берлинского конгресса. Усилиями западной и в первую очередь английской дипломатии не были претворены в жизнь благоприятные для армян положения Сан-Стефанского договора (англо-русское – от 30 мая 1878 г. и англо-турецкое – от 4 июня 1878 г. секретные соглашения). Тем самым была подготовлена почва для того, чтобы на Берлинском конгрессе, а также на последующих международных форумах Армянский вопрос был обречен на провал в силу корыстной политики держав в отношении Османской Турции.

THE 1877-1878 RUSSIAN-TURKISH WAR AND THE ARMENIAN QUESTION IN SAN-STEFANO TREATY

GEVORG HARUTYUNYAN

S u m m a r y

The Balkan Slavons got their autonomy owing to support of Russia in 1876, and finally this fact made the Eastern crisis more complicated. As a result of it started the Russian-Turkish war (1877-1878). After the victory in this war Russia had its own political claims in Western Armenia and some territories of Minor Asia at the coming peace conference. In fact there were formed some relations between the representatives of Russian diplomats, Armenian patriarch N. Varzhapetyan and other Armenian representatives, who, taking into consideration the Slavonic example, claimed on the autonomy of the Western Armenians. This problem wasn't taken into consideration during the San-Stefano preliminary Treaty. According to the 16th item of this treaty the Porta had to realize

corresponding reforms in those regions of Turkey, which were populated by Armenians and to provide the Armenians' safe life conditions, protecting them from the Kurds and the Circassians. All this was going to be realized with the help of Russian troops. As a counterbalance to the 16th item the Western Armenians wrote their own program of autonomy and showed it to Alexander II on March 15, 1878. Neither this program nor the program of Nubar pasha took any international resonance on the eve of the Berlin congress. Owing to the efforts of western and first of all English diplomacy none of the favourable for Armenians items of the San-Stefano Treaty was realized (English-Russian secret agreement of 30.05.1878 and English-Turkish secret agreement of 04.06.1878). All this made the Armenian question be doomed during the Berlin congress and also during the following international conferences as the European powerful countries had their own goals in Ottoman Turkey.